

ՀՐԱԿԵՐ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
"Ելակետային գնահատում" IRFSP/TA/QCBS-2016/033

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր
խորհրդատվական Ծառայություններ՝ **Որակի և Գնի վրա հիմնված ընտրություն**
ԳԶԱՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶԱՀ/
"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ /
իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական
ծառայությունները ձեռք բերելու համար:

Ծրագրի նպատակն է՝ բարելավել ազգաբնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը
աղքատության բարձր մակարդակ ունեցող գյուղական տարածքներում՝ փոքրածավալ
գյուղատնտեսվարման ու հետ-արտադրական գործընթացների արդյունավետության բարձրացման և
անցման փոքրածավալ տնտեսվարումից՝ բարձրարժեք ապրանքային մշակաբույսերի աճեցման միջոցով,
ստեղծելով կապ ագրո-վերամշակող կառույցների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների
միջև, նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները, ստեղծելով նաև
զբաղվածության հնարավորություններ, բարելավելով սննդի անվտանգությունը և ընտանեկան
առողջապահությունը:

Խորհրդատուի ընտրության նպատակն է՝ իրականացնել Ծրագրի Մոնիտորինգի և Գնահատման
արդյունավետ համակարգի ստեղծումը, ձեռք բերելով տվյալների կողմնորոշիչ բազա, որը թույլ կտա
չափել ծրագրի իրականացումը՝ Ծրագրի Նախագծի Զեկույցում / ԾՆԶ / նախատեսված նպատակների
համեմատությամբ, ինչպես նաև գնահատելու թիրախային շահառուների վրա ակնկալվող ազդեցությունը:
Ելակետային Գնահատման /ԵԳ/ արդյունքում հնարավոր կլինի նաև ստանալ խորը պատկերացում
թիրախային տարածքներում սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ, ինչը կօգտագործվի ծրագրի
ռազմավարությունը համապատասխանեցնելու և ԾՆԶ-ում նախորոշված աշխատանքները լավագույնս
ուղղորդելու համար:

ԵԳ-ն շրջանակում տեղեկություններ կստացվեն թարմացված տրամաբանական կառուցվածքից
քաղված ծրագրային ցուցանիշների /Log Frame/ և ԱԱԿՀ/RIMS ցուցանիշների ընթացիկ իրավիճակի
վերաբերյալ:

Առաջադրանքը բաղկացած է հետևյալ հիմնական ծառայություններից՝

1. **Տնային տնտեսությունների/ֆերմերների ուսումնասիրությունների իրականացում**
2. **Ելակետային գնահատման ավարտական հաշվետվության ներկայացում**
3. **Աշխարհագրական քարտեզավորմամբ ուսումնասիրություն (Geo-referenced survey)**
4. **Power-point ծրագրով ԵԳ հիմնական արդյունքների ներկայացում**

Ծրագիրը իրականացնելու համար խորհրդատուի ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու
նպատակով ԾԻԳ-ը բոլոր շահագրգիռ և որակավորված կազմակերպություններին հրավիրում է
ներկայացնել Հետաքրքրության հայտեր:

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ խորհրդատվական ծառայությունների մատուցման
վերաբերյալ տեղեկատվություն /սոցիալական հետազոտությունների իրականացման փորձ
ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ գյուղատնտեսության, տնտեսական և սեռերի
իրավահավասարության ոլորտներում, գյուղական տարածքներում հետազոտություններ
իրականացնելու փորձ, գյուղական գնահատման գործիքների՝ որպես ելակետային տվյալների
հավաքագրման միջոց, օգտագործման փորձ և այլն;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով
ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),

Կարճ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝

- Վերջին երեք տարիների ընթացքում աշխարհագրական քարտեզավորման եղանակով (geo-referenced survey) արդյունքների ուսումնասիրության փորձառություն (առավելագույնը 30 միավոր)
- Վերջին հինգ տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում ուսումնասիրությունների իրականացման, վերլուծության և հաշվետվողականության փորձառություն (առավելագույնը 20 միավոր)
- Վերջին հինգ տարիների ընթացքում ելակետային և ավարտական ուսումնասիրությունների իրականացման, վերլուծության և հաշվետվողականության փորձառություն (առավելագույնը 50 միավոր)

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. [/https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b](https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b) / սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2016թ. մայիսի 05-ը, ժ. 17.00:

ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;

Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@raed.am